ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/77/78

ք. Երևան «23» 07 2019թ.

«Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը», ի դեմս **Աշոտ Կիրակոսյանի**, որը գործում է Հիմնադրամի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և **«ԱՐՏԵԶԻԱ» ՍՊԸ -ն**, ի դեմս տնօրեն **Հ. Միրզախանյանի**, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված **«ՀՀ Արարատի մարզի Նորամարգ համայնքի ոռոգման ցանցի առանձին հատվածների վերականգնում», «ՀՀ Արարատի մարզի Սիփանիկ համայնքի ոռոգման ցանցի կառուցում»** աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 **Պայմանագրով նախատեսված աշխատանքներն սկսվում են**

1-ին չափաբաժին՝ «ՀՀ Արարատի մարզի Նորամարգ համայնքի ոռոգման ցանցի առանձին հատվածների վերականգնում» Պայմանագրով սահմանված աշխատանքների տեխնիկական հսկողության պայմանագիրն ուժի մեջ մտնելու պահից և կատարման ժամկետը սահմանվում է 120 օր,

2-րդ չափաբաժին՝ «ՀՀ Արարատի մարզի Սիփանիկ համայնքի ոռոգման ցանցի կառուցում» Պայմանագրով սահմանված աշխատանքների տեխնիկական հսկողության պայմանագիրն ուժի մեջ մտնելու պահից և կատարման ժամկետը սահմանվում է 120 օր :

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքները կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին (հավելված 5) և ծավալաթերթին (հավելված 1) համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրացուցային օր: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **30 աշխատանքային օրվա** աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և

ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է **31,367,400 (երեսունմեկ միլիոն երեք հարյուր վաթսունյոթ հազար չորս հարյուր) ՀՀ դրամ, որից 5,227,900 (հինգ միլիոն երկու հարյուր քսանյոթ հազար ինը հարյուր) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:**

Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը, ընդ որում՝

1-ին չափաբաժին՝ 21,174,000 (քսանմեկ միլիոն մեկ հարյուր յոթանասունչորս հազար) ՀՀ դրամ,

2-րդ չափաբաժին՝ 10,193,400 (տասը միլիոն մեկ հարյուր ինսուներեք հազար չորս հարյուր) ՀՀ դրամ:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը :

5.4 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳՏ=ՄԳ/ՆԳxԾԳՏxԾ, որտեղ՝

ՄԳ-ն Պայմանագրի 5.1 կետում նշված գինն է[1].

ՆԳ-ն շինարարական ծրագրի նախահաշվային գինն է.

ԾԳՏ-ն նախահաշվով ըստ աշխատանքի առանձին տեսակների համար սահմանված միավոր գինն է.

Ծ-ն կատարողական ակտերով ներկայացված աշխատանքի ծավալն է.

ՎԳՏ - նախահաշվով սահմանված առանձին տեսակների աշխատանքների դիմաց վճարվող գումարն է:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը

խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ

---

[1] *Եթե պայմանագրում ներառված են 1-ից ավելի չափաբաժիններով ներկայացված գնման առարկաներ,ապա ՄԳ-ն պայմանագրի 5.1 կետում նշված՝ համապատասխան չափաբաժնի գինն է:*

փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Սույն պայմանագիրը կազմված է **7 էջից,** կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն

պայմանագրի N 1, N 1.1, N 2, N 3, N 4 և N 4.1, N 5, N 6 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ	«ԱՐՏԵԶԻԱ» ՍՊԸ
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037, Կ.Ուլնեցու 31	Հասցե՝Արմավիրի մարզ գ. Արտիմետ
ՀՎՀՀ՝00846441	ՀՎՀՀ՝ 04413813
Հ/Հ՝ 900018001231	Հ/հ՝ 220213330305000
Կենտրոնական գանձապետարան	Բանկ՝ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ ՓԲԸ Էջմիածին մ/ճ
Գործադիր տնօրեն	Տնօրեն
Աշոտ Կիրակոսյան	Հովիկ Մինասյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Անհրաժեշտության դեպքում պայմանագրի նախագծում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված թիվ 1
« 23 » « 07 » 2019 թ. կնքված
ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/77/78 ծածկագրով պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ *

«ՀՀ Արարատի մարզի Նորամարգ համայնքի ոռոգման ցանցի առանձին հատվածների վերականգնում»

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

ՀՀ	Աշխատանքների անվանումը	Չափ. միա-վորը	Քա-նակը	Միավորի արժեքը, հազ.դրամ	Ընդհանուր արժեքը, հազ.դրամ
1	2	3	4	5	6
	1. Ջրատար Բ-1				
	Հողային աշխատանքներ				
1,1	IV կարգի բնահողերի բանդում էքսկավատորով կողլիցքով, խրամուղու ստեղծումով	մ^3	6,5	0,514	3,344
1,2	III կարգի բնահողերի մշակում էքսկավատորով բարձումով	մ^3	362,1	0,499	180,860
1,3	Բարձված բնահողերի տեղափոխում 3կմ-ից նախապատրաստական շերտի և հետլիցքի համար	տ	615,6	0,783	481,964
1,4	Նախապատրաստական շերտի ստեղծում բերովի փափուկ բնահողերից 10սմ հաստ.	մ^3	10,1	1,928	19,468
1,5	Հետլիցք ձեռքով բերովի փափուկ բնահողերով, տոփանումով	մ^3	246,4	0,996	245,473
1,6	Հետլիցք բուլդոզերով տեղափոխումով 5մ բերովի բնահողերով	մ^3	105,6	0,056	5,898
1,7	Հետլիցք բուլդոզերով տեղափոխումով 5մ օգտակար հանույթի բնահողերով	մ^3	6,5	0,056	0,363
	Բետոնային աշխատանքներ			0,000	0,000
1,8	Միաձույլ B15 դասի բետոն, ներառյալ նյութերի արժեքը, մատակարարումը և տեղադրումը	մ^3	0,100	47,259	4,726
	Խողովակներ, խողովակամբաններ, մետաղական կոնստրուկցիաներ			0,000	0,000
1,9	Փ400մմ SN4 պոլիէթիլենային ծալքավոր խողովակի մոնտաժ և փորձարկում	մ	405,0	1,466	593,638
1,10	Փ400մմ SN4 պոլիէթիլենային ծալքավոր խողովակի արժեք, մատակարարում	մ	405,0	21,434	8680,854
1,11	Ռետինե մանժետ Փ400մմ, արժեք, մատակարարում	հատ	67,0	3,140	210,409
1,12	Փ530x5մմ պողպատե խողովակ պատյան , արժեք, մատակարարում, տեղադրում	մ	6,0	53,724	322,341
1,13	Փ219x3մմ պողպատե կարճախողովակներ, L=0.5մ, արժեք, մատակարարում, մոնտաժ	մ	0,50	10,724	5,362
1,14	Պոլիէթիլենե ձևավոր մասեր - Փ400-225մմ պոլիէթիլենե անցում, Py=0.25ՄՊա, արժեք, մատակարարում և տեղադրում	հատ	1,0	63,345	63,345
1,15	Պոլիէթիլենե ձևավոր մասեր - Փ400մմ պոլիէթիլենե արմունկ, Py=0.25ՄՊա, a=30^0-60^0, արժեք, մատակարարում և տեղադրում	հատ	1,0	67,083	67,083
1,16	Հարմարակցիչ պոլիէթիլեն -պողպատ - Փ225մմ , Py=0.25ՄՊա, (Փ225մմ կարճախողովակ, Փ219x4մմ պողպատե 0.3մ խողովակ, Փ200մմ պողպատե կցաշուրթ և Փ200մմ պողպատե ազատ կցաշուրթ) արժեք, մատակարարում և տեղադրում	հատ	1,0	52,907	52,907
1,17	Փ200մմ սողնակ Py=0.25մմ, արժեք, մատակարարում և տեղադրում	հատ	1,00	91,096	91,096
1,18	Փ200մմ ապողպատե կցաշուրթ Py=0.25մմ, արժեք, մատակարարում և տեղադրում	հատ	2,00	23,583	47,166
1,19	Փ300մմ պողպատե խողովակի ապամոնտաժ	մ	5,0	1,075	5,377
1,20	Փ300մմ պողպատե ապամոնտաժված խողովակի բարձում ինքնաթափ	տ	0,195	0,637	0,124
1,21	Բարձված խողովակների տեղափոխում 3կմ	տ	0,195	0,783	0,153
	Մեկուսիչ աշխատանքներ			0,000	0,000
1,22	Մետաղական էլեմենտների ներկում երկշերտ ջրակայուն ներկով, ներառյալ նյութերի արժեքը, մատակարարումը	մ^2	2	0,725	1,449

1,23	Փ530մմ պողպատե խողովակի նորմալ հիդրոկեկուսացում, նյութերի արժեք, մատակարարում	մ	6	5,109	30,656
	Ընդամենը ըստ 1 բաժնի				11114,057
	2. Ջրատար Բ-2				
	Հողային աշխատանքներ				
2,1	IV կարգի բնահողերի բանդում էքսկավատորով կողլիցքով, խրամուղու ստեղծումով	$մ^3$	6,5	0,514	3,344
2,2	III կարգի բնահողերի մշակում էքսկավատորով բարձումով	$մ^3$	385,9	0,499	192,748
2,3	Բարձված բնահողերի տեղափոխում 3կմ-ից նախապատրաստական շերտի և հետլիցքի համար	տ	656,0	0,783	513,642
2,4	Նախապատրաստական շերտի ստեղծում բերովի փափուկ բնահողերից 10սմ հաստ.	$մ^3$	12,7	1,928	24,479
2,5	Հետլիցք ձեռքով բերովի փափուկ բնահողերով, տոփանումով	$մ^3$	262,5	0,996	261,512
2,6	Հետլիցք բուլդոզերով տեղափոխումով 5մ բերովի բնահողերով	$մ^3$	112,5	0,056	6,283
2,7	Հետլիցք բուլդոզերով տեղափոխումով 5մ օգտակար հանույթի բնահողերով	$մ^3$	6,5	0,056	0,363
	Բետոնային աշխատանքներ			0,000	0,000
2,8	Միաձույլ B15 դասի բետոն, ներառյալ նյութերի արժեքը, մատակարարումը և տեղադրումը	$մ^3$	0,100	47,259	4,726
	Խողովակներ, խողովակամրաններ, մետաղական կոնստրուկցիաներ			0,000	0,000
2,9	Փ400մմ SN4 պոլիէթիլենային ծալքավոր խողովակի մոնտաժ և փորձարկում	մ	433,0	1,466	634,679
2,10	Փ400մմ SN4 պոլիէթիլենային ծալքավոր խողովակի արժեք, մատակարարում	մ	433,0	21,434	9281,012
2,11	Ռետինե մանժետ Փ400մմ, արժեք, մատակարարում	հատ	71,0	3,140	222,971
2,12	Փ530x5մմ պողպատե խողովակ պատյան , արժեք, մատակարարում, տեղադրում	մ	6,0	53,724	322,341
2,13	Փ219x3մմ պողպատե կարճախողովակներ, L=0.5մ, արժեք, մատակարարում, մոնտաժ	մ	0,50	10,724	5,362
2,14	Պոլիէթիլենե ձևավոր մասեր - Փ400-225մմ պոլիէթիլենե անցում, Py=0.25ՄՊա, արժեք, մատակարարում և տեղադրում	հատ	1,0	63,345	63,345
2,15	Պոլիէթիլենե ձևավոր մասեր - Փ400մմ պոլիէթիլենե արմունկ, Py=0.25ՄՊա, $a=30^0$-60^0, 11^0-30^0, արժեք, մատակարարում և տեղադրում	հատ	2,0	67,083	134,167
2,16	Հարմարակցիչ պոլիէթիլեն -պողպատ - Փ225մմ , Py=0.25ՄՊա, (Փ225մմ կարճախողովակ, Փ219x4մմ պողպատե 0.3մ խողովակ, Փ200մմ պողպատե կցաշուրթ և Փ200մմ պողպատե ազատ կցաշուրթ) արժեք, մատակարարում և տեղադրում	հատ	1,0	52,907	52,907
2,17	Փ200մմ սողնակ Py=0.25մմ, արժեք, մատակարարում և տեղադրում	հատ	1,00	91,096	91,096
2,18	Փ200մմ սպողպատե կցաշուրթ Py=0.25մմ, արժեք, մատակարարում և տեղադրում	հատ	2,00	23,583	47,166
2,19	Փ300մմ պողպատե խողովակի ապամոնտաժ	մ	5,0	1,075	5,377
2,20	Փ300մմ պողպատե ապամոնտաժված խողովակի բարձում հնարավոր	տ	0,195	0,637	0,124
2,21	Բարձված խողովակների տեղափոխում 3կմ	տ	0,195	0,783	0,153
	Մեկուսիչ աշխատանքներ			0,000	0,000
2,22	Սեռաղական էլեմենտների ներկում երկշերտ ջրակայուն ներկով, ներառյալ նյութերի արժեքը, մատակարարումը	$մ^2$	2	0,725	1,449
2,23	Փ530մմ պողպատե խողովակի նորմալ հիդրոկեկուսացում, նյութերի արժեք, մատակարարում	մ	6	5,109	30,656
	Ընդամենը ըստ 2 բաժնի				11899,903
	3. Ջրթող				
	Հողային աշխատանքներ				
3,1	IV կարգի բնահողերի բանդում էքսկավատորով կողլիցքով, խրամուղու ստեղծումով	$մ^3$	2,0	0,514	1,029
3,2	Հետլիցք ձեռքով օգտակար հանույթի փափուկ բնահողերով, տոփանումով	$մ^3$	2	0,996	1,992
	Խողովակներ, խողովակամրաններ, մետաղական կոնստրուկցիաներ				0,000

3,3	Φ50x2մմ պոլիէթիլենային խողովակի արժեք, մատակարարում մոնտաժ	մ	3,0	0,896	2,689
3,4	Պոլիէթիլենե ձևավոր մասեր - Φ400-50մմ պոլիէթիլենե խամուտ անցում, Py=0.25ՄՊա, արժեք, մատակարարում և տեղադրում	հատ	1,0	23,541	23,541
3,5	Հարմարակցիչ պոլիէթիլեն -պողպատ - Φ50մմ , Py=0.25ՄՊա, (Φ50մմ կարճախողովակ, Φ51x3մմ պողպատե 0.3մ խողովակ, Φ50մմ պողպատե կցաշուրթ և Φ50մմ պողպատե ազատ կցաշուրթ) արժեք, մատակարարում և տեղադրում	հատ	1,0	13,235	13,235
3,6	Φ50մմ սողնակ Py=0.25մմ, արժեք, մատակարարում և տեղադրում	հատ	1,00	9,995	9,995
3,7	Φ50մմ ապողպատե կցաշուրթ Py=0.25մմ, արժեք, մատակարարում և տեղադրում	հատ	2,00	6,076	12,152
3,8	Φ53x3մմ պողպատե կարճախողովակներ, L=0.2մ, արժեք, մատակարարում, մոնտաժ	մ	0,40	2,611	1,044
3,9	Φ50մմ ռետինե խողովակ, արժեք, մատակարարում, տեղադրում	մ	3,0	2,303	6,909
	Մեկուսիչ աշխատանքներ				0,000
3,10	Մետաղական էլեմենտների ներկում երկշերտ ջրակայուն ներկով, ներառյալ նյութերի արժեքը, մատակարարումը	մ²	1	0,725	0,725
	Ընդամենը ըստ 3 բաժնի 1հատի համար				73,311
	Ընդամենը ըստ 3 բաժնի 7հատի համար				513,18
	Ընդամենը ըստ 1-3 բաժինների				23527,14
	ԱԱՀ 20%				4705,43
	Ընդամենը, ներառյալ ԱԱՀ				28232,566

* Կապալառուն աշխատանքները կատարում է ՀՀ Արարատի մարզի Նորամարգ համայնք հասցեում:

	ՊԱՏՎԻՐԱՏՈՒ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037, Կ.Ուլնեցու 31 ՀՎՀՀ՝00846441 Հ/Հ՝ 900018001231 Կենտրոնական գանձապետարան Գործադիր տնօրեն Աշոտ Կիրակոսյան /ստորագրություն/ Կ.Տ	ԿԱՊԱԼԱՌՈՒ << Արտեզիա >> ՍՊԸ Հասցեն՝ ՀՀ,Արմավիրի մարզ գ.Արտիմետ ՀՎՀՀ՝04413813 Հ/Հ՝ 220213330305000 Բանկ՝«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ -ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ Էջմիածին մասնաճյուղ Տնօրեն Հովիկ Միրզախանյան /ստորագրություն/ Կ.Տ

Հավելված թիվ 1.1
«23» «07» 2019 թ. կնքված
ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/77/78 ծածկագրով պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ *
«ՀՀ Արարատի մարզի Միփանիկ համայնքի ոռոգման ցանցի կառուցում»
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

h/h	Աշխատանքների անվանումը	Չափի միավոր	Քանակ	Միավորի ընդ.արժ հազ.դրամ	Ընդհանուր արժեքը հազ. դրամ
1	2	3	4	5	6
	քանդման աշխատանքներ				
1	Ոռոգման գծի երկարությամբ հողի հարթեցում բուլդոզերով մեկ անցումով	$մ^2$	1292,5	0,015	19,178
2	2-րդ կարգի գրունտի քանդում մեխանիզմով կողլիցք	$մ^3$	743,55	0,470	349,643
	մոնտաժման աշխատանքներ				
1	Փափուկ գրունտից անկողնակի պատրաստում	$մ^3$	61,45	0,962	59,111
2	Պոլիէթիլենային խողովակների մոնտաժում d=160*4,9մմ, 5,0 մթն.ճնշ.	գծմ	1229,00	6,340	7791,989
3	Պոլիէթիլենային խողովակների մոնտաժում d=80*5մմ, 12,5 մթն.ճնշ.	գծմ	42,00	2,423	101,752
4	Եռաբաշխիչ 160*160*160մմ	հատ	1,00	27,272	27,272
5	Եռաբաշխիչ 160*80*160մմ	հատ	10,00	27,898	278,979
6	Թևքում 160*160մմ	հատ	8,00	18,260	146,077
7	Թևքում 80*80մմ	հատ	20,00	4,373	87,451
8	Պոլիէթիլենից-մետաղի անցում 160*160մմ	հատ	2,00	23,094	46,188

1	2	3	4	5	6
9	Պոլիէթիլենից-մետաղի անցում 80*80մմ	հատ	48,00	12,038	577,801
10	Մետաղական սողնակի /կցաշուրթային/ մոնտաժում Φ160մմ	հատ	1	138,315	138,315
11	Մետաղական սողնակի /կցաշուրթային/ մոնտաժում Φ80մմ	հատ	10	76,400	764,000
12	Գրունտի ետլիցք տոփանումով	$մ^3$	682,10	0,962	656,180
13	Մետաղական էլեմենտներ կցվածքային հանգույցներում	կգ	56,00	0,691	38,696
14	Միացում խորքային հորի խողովակին Φ400	տեղ	1,00	8,809	8,809
	Ընդամենը				11091,441
	Շահույթ 11%				1220,058
	Ընդամենը				12311,499
	ԱԱՀ 20%				2462,300
	Ընդամենը				14773,799

* Կապալառուն աշխատանքները կատարում է ՀՀ Արարատի մարզի Սիփանիկ համայնք հասցեում:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037, Կ.Ուլնեցու 31
ՀՎՀՀ՝00846441
Հ/Հ՝ 900018001231
Կենտրոնական գանձապետարան

Գործադիր տնօրեն
Աշոտ Կիրակոսյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ
<< Արտեզիա >> ՍՊԸ
Հասցեն՝ ՀՀ,Արմավիրի մարզ գ.Արտիմետ
ՀՎՀՀ՝04413813
Հ/Հ՝ 220213330305000
Բանկ՝«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ -ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ»
ՓԲԸ Էջմիածին մասնաճյուղ

Տնօրեն
Հովիկ Միրզախանյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 2
«23» 07 2019 թ. կնքված
ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/77/78 ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը**	
		Սկիզբը	Ավարտը
1	**«ՀՀ Արարատի մարզի Նորամարգ համայնքի ոռոգման ցանցի առանձին հատվածների վերականգնում»**	*Պայմանագրով սահմանված աշխատանքների տեխնիկական հսկողության պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից*	*120 օր տևողությամբ*
ԸՆԴԱՄԵՆԸ		*Պայմանագրով սահմանված աշխատանքների տեխնիկական հսկողության պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից*	*120 օր տևողությամբ*
2	**«ՀՀ Արարատի մարզի Սիփանիկ համայնքի ոռոգման ցանցի կառուցում»**	*Պայմանագրով սահմանված աշխատանքների տեխնիկական հսկողության պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից*	*120 օր տևողությամբ*
ԸՆԴԱՄԵՆԸ		*Պայմանագրով սահմանված աշխատանքների տեխնիկական հսկողության պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից*	*120 օր տևողությամբ*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037,
Կ.Ուլնեցու 31
ՀՎՀՀ՝00846441
Հ/Հ՝ 900018001231
Կենտրոնական գանձապետարան

Գործադիր տնօրեն
Աշոտ Կիրակոսյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«ԱՐՏԵԶԻԱ» ՍՊԸ

Հասցե՝Արմավիրի մարզ գ. Արտիմետ

ՀՎՀՀ՝ 04413813
Հ/հ՝ 220213330305000
Բանկ՝ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ ՓԲԸ Էջմիածին մ/ճ
Տնօրեն
Հովիկ Միրզախանյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 3
« 23 » 07 2019 թ. կնքված
***ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/77/78** ծածկագրով պայմանագրի*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգմանի (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45241160/505	ներտնտեսային ոռոգման ցանցերի վերակառուցում	-	-	-	-	-	-	21,174,000	21,174,000	21,174,000	21,174,000	21,174,000	21,174,000	21,174,000
2	45241160/504	ներտնտեսային ոռոգման ցանցերի վերակառուցում	-	-	-	-	-	-	10,193,400	10,193,400	10,193,400	10,193,400	10,193,400	10,193,400	10,193,400

* ***Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է***
*** հրավերում գումարները նշվում են փոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս փոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037,
Կ.Ուլնեցու 31
ՀՎՀՀ՝00846441
Հ/Հ՝ 900018001231
Կենտրոնական գանձապետարան

Գործադիր տնօրեն
Աշոտ Կիրակոսյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«ԱՐՏԵԶԻԱ» ՍՊԸ

Հասցե՝Արմավիրի մարզ գ. Արտիմետ

ՀՎՀՀ՝ 04413813
Հ/հ՝ 220213330305000
Բանկ՝ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ ՓԲԸ Էջմիածին մ/ճ
Տնօրեն
Հովիկ Միրզախանյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 4
«23» 04 2019 թ. կնքված
***ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/77/78** ծածկագրով պայմանագրի*

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.
Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 4.1
«23» 07 2019 թ. կնքված
***ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/77/78** ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Հավելված 5
«23» 07 2019 թ. կնքված
ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/77/78 ծածկագրով պայմանագրի

Գծագրերը կից

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037,
Կ.Ուլնեցու 31
ՀՎՀՀ՝00846441
Հ/Հ՝ 900018001231
Կենտրոնական գանձապետարան

Գործադիր տնօրեն
Աշոտ Կիրակոսյան

ստորագրություն
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«ԱՐՏԵԶԻԱ» ՍՊԸ

Հասցե՝Արմավիրի մարզ գ. Արտիմետ

ՀՎՀՀ՝ 04413813
Հ/հ՝ 220213330305000
Բանկ՝ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ ՓԲԸ Էջմիածին մ/ճ
Տնօրեն
Հովիկ Միրզախանյան

ստորագրություն
Կ.Տ

Հավելված N 6
«23» «07» 2019 թ. կնքված
ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/77/78 *ծածկագրով պայմանագրի*

Պատվիրատու
Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037,
Կ.Ուլնեցու 31
ՀՎՀՀ՝00846441
Հ/Հ՝ 900018001231
Կենտրոնական գանձապետարան

Կատարող
_____
_____
գտնվելու վայրը _____
հ/հ_____
հվհհ_____

ԱԿՏ
ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՏԱՐԱԾՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 2019 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ **«ՀՀ Արարատի մարզի Նորամարգ համայնքի ոռոգման ցանցի առանձին հատվածների վերականգնում», «ՀՀ Արարատի մարզի Սիփանիկ համայնքի ոռոգման ցանցի կառուցում»** աշխատանքներ
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 2019 թ.
Պայմանագրի համարը՝ ***ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/77/78***
Սույնով Պատվիրատուն և **ՀՀ Արարատի մարզի Նորամարգ** համայնքը և**ՀՀ Արարատի մարզի Սիփանիկ** համայնքը, մի կողմից և Կատարողը, մյուս կողմից, հիմք ընդունելով թիվ ***ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/77/78*** պայմանագրի **3.2.3** կետի պահանջները, կազմեցին սույն **ԱԿՏ-ը** հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում նախատեսված աշխատանքների կատարման համար Պատվիրատուն, ՀՀ Արարատի մարզի Նորամարգ համայնքի և**ՀՀ Արարատի մարզի Սիփանիկ** համայնքի **հետ համատեղ, հանձնում են, իսկ Կատարողն ընդունում է կողմերի միջև կնքված պայմանագրին կից Նախագծով նախատեսված տարածքը:**

Տարածքը հանձնեց	Տարածքը ընդունեց
ստորագրություն	ստորագրություն
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.